Արձանագրություն N 3

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39» ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան 23.05.2018 թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Սողոմոնյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ռ. Ղեչյան
	Տ. Տողրամաջյան
	Ծ. Հովհաննիսյան
	Ա. Ավալյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ռ. Ասատրյան

Օրակարգում՝

1. Գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցին որոշելու մասին

(Ա. Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ.

"Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ հարցման մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է համապատասխան տեղեկատվություն:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ «Սոնատինա» ՍՊԸ, «ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ, «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ, «Ա/Ձ Արման Ադամյան» և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ների կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Սոնատինա» ՍՊԸ, «ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ, «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ, «Ա/Ձ Արման Ադամյան» և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ -ների մասով համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Սոնատինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.3 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ «ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ, «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ, «Ա/Ձ Արման Ադամյան» և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

1.3.1 «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ-ի կողմից հրավերի N 6.1 Հավելվածով ներկայացված՝

4-րդ չափաբաժնի մասով առաջարկվող «Ջութակ 4/4» ապրանքի տեխնիկական բնութագիրը համարժեք չէ հրավերով պահանջված տեխնիկական բնութագրին: Առաջարկվող ջութակի ներքևի դեկան թխկենի է, մինչդեռ հրավերով պահանջվել է ալիքավոր թխկենի:

8, 9 և 10-րդ չափաբաժինների մասով առաջարկվող «Ֆլեյտա», « Շեփոր» և «Կլարնետ» ապրանքների տեխնիկական բնութագրերը համարժեք չեն հրավերով սահմանված համապատասխան ապրանքային նշանի տեխնիկական բնութագրերին: 8 և 10-րդ չափաբաժինների մասով գործիքները հրավերով պահանջվել են ուսանողական, սակայն մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրերում ուսանողական բառը բացակայում է:

13 և 15-րդ չափաբաժինների մասով առաջարկվող «քանոն» և «ոտ» ապրանքների տեխնիկական բնութագրերում կան անհամապատասխանություններ: Գործիքները հրավերով պահանջվել են համերգային, սակայն մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրերում համերգային բառը բացակայում է:

3, 4, 8, 9, 10, 13, 15-րդ չափաբաժիններում հրավերով պահանջվել է, որ գրծիքները և պատյանները լինեն նոր և չօգտագործված, սակայն մասնակցի առաջարկված տեխնիկական բնութագրում նշված բառերը բացակայում են:

1.3.2 «ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ-ի կողմից հրավերի N 6.1 Հավելվածով ներկայացված՝

5, 6 7, 14, 17, 18, 19, 20, 21, 22, 23 և 24-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների «ապրանքային նշանը» սյունակում նշված են գնման առարկաների անվանումները, մինչդեռ պետք է նշվի ապրանքային նշանը: 5, 6 և 7-րդ չափաբաժինների մասով առաջարկվող «Թավջութակ 1/4», «Թավջութակ 2/4» և «Թավջութակ 3/4» ապրանքների «արտադրողի անվանումը» սյունակում նշված է «ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ բառը, սակայն մասնակիցը պետք է նշի արտադրողի անվանումը, իսկ «ծագման երկիրը» սյունակում մասնակիցը նշել է «Եվրոպա կամ Չինաստան» բառերը,

սակայն պետք է նշվի հստակ ծագման երկիրը առանց երկակի մեկնաբանման հնարավորության:

1.3.3 «Ա/Ձ Արման Ադամյան»-ի կողմից հրավերի N 6.1 Հավելվածով ներկայացված՝ 4-րդ չափաբաժնի մասով առաջարկվող «ֆագոտ» ապրանքի տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն: Գործիքը հրավերով պահանջվել է ուսանողական, սակայն մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում ուսանողական բառը բացակայում է:

1. 3. 4 «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից հրավերի N 6.1 Հավելվածով ներկայացված՝ 16-րդ չափաբաժնի մասով առաջարկվող «սանթուր» ապրանքի «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» սյունակները լրացված չեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.4 Հանձնաժողովը որոշեց կասեցնել ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39» ծածկագրով ընթացակարգի որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստը և հիմք ընդունելով ՀՀ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 47-րդ կետը՝ ծանուցել «ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ-ին, «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ-ին, «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին և «Ա/Ձ Արման Ադամյան»-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրության 1.3 կետում նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝	Ա. Սողոմոնյան	
Անդամներ՝	Ռ. Ղլեչյան	
	Տ. Տողրամաջյան	
	Ծ. Հովհաննիսյան	
	Ա. Ավալյան	

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Ասատրյան